



ԻՐԱԿՈՒՄԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԾԻՔ

«Աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» հայաստանի հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

ՀՀ առողջապահության նախարարի 20 օգոստոսի 2021թ. ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020թ. սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին թիվ 65-Ն հրամանով¹ նախատեսվել են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող սանիտարական նոր կանոններ², համաձայն որոնց՝ «աշխատողները յուրաքանչյուր 14 օրը մեկ ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության ախորոշման պոլիմերազային շղթայական հետազոտության (ՊՇՌ հետազոտության) բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության, առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 10-ի թիվ 2688-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ, բացառությամբ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների: Հետազոտությունն իրականացնում է աշխատողը՝ իր հաշվին»:

Միաժամանակ, 08.10.2020թ.-ին հանրային քննարկման են դրվել «Աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը³, որոնցով սահմանվում են նույնանման կանոններ՝ հիմնվելով հենց վերը նշված հրամանի կանոնների վրա:

Այսպես՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով նախատեսվում է սահմանել «հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին աշխատանքի (ծառայության) չթույլատրելու, պաշտոնից կամ ծառայությունից ազատելու (լիազորությունները կամ ծառայությունը դադարեցնելու) առանձնահատուկ հիմքեր: Նույն նախագծով առաջարկվում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ սահմանված՝ վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային ավտանգության կանոններով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթեր ներկայացնելը աշխատանքի (ծառայության) ներկայանալիս: Ընդ որում, նախագծով մինչև վերոգրյալ պարտականությունը չկատարելը աշխատողին չի թույլատրվում գտնվելու աշխատավայրում, կատարելու իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները և չի տրամադրվում վարձատրություն՝ մինչև

¹ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրաման, 20 օգոստոսի 2021թ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155352>

² Կանոնները վերաբերում են ինչպես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ մասնավոր կազմակերպությունների գործունեության կազմակերպման ընթացքում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման միջոցառումներին:

³ <https://www.e-draft.am/projects/3620/about>



ԻՐԱԿՈՒԹՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ըստ օրենքի նախագծի՝ սահմանված պարտականությունների խախտման արդյունքում իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունների կատարումը չթույլատրվելու հետևանքով ավելի քան 30 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 50 օր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները չկատարելը հանրային պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնից ազատելու կամ հանրային ծառայողի լիազորությունները դադարեցնելու (ծառայությունից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու) հիմք է: Միաժամանակ, նշված պարտականության կատարումից բացառություն է նախատեսված Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, վարչապետի, համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Սահմանադրական դատարանի դատավորի, անկախ պետական մարմնի անդամի, ինքնավար մարմնի անդամի, Վիճակագրության պետական խորհրդի անդամի, վճարել, վերաքննիչ և առաջին աստիճանի դատարանի դատավորի, գլխավոր դատախազի պաշտոնների համար:

ՀՀ աշխատանքային օրենսգրքում ևս նախատեսվում է կատարել համանման փոփոխություն: Մասնավորապես նախատեսվում է Օրենսգրքի 108-րդ հոդվածում նախատեսվում է լրացնել նոր 1.1-ին մաս, ըստ որի՝ աշխատանքի ներկայանալիս բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ սահմանված՝ վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով նախատեսված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը աշխատողի կողմից չներկայացնելու դեպքում գործատուն աշխատողին չի թույլատրում գտնվելու աշխատավայրում, կատարելու իր աշխատանքային պարտականությունները և չի վճարում աշխատավարձ մինչև սույն մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը: Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվում է լրացնել նոր 13-րդ կետ, ըստ որի՝ սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետևանքով ավելի քան 30 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 50 օր աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում:

Որպես ՀՀ աշխատանքային օրենսգրքում և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում նման փոփոխություններ կատարելու հիմնավորում բերվում է միայն այն, որ ներկայում ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ամբողջ աշխարհում շարունակում է պահպանվել կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ստեղծված արտակարգ իրավիճակը: Նման իրավիճակի պահպանման պայմաններում, աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, նկատվում է կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելու դեպքերի, ինչպես նաև այդ հիվանդության հետևանքով մահվան դեպքերի թվերի աճ:

Հատկանշական է, որ որպես դեռևս 01.09.2021թ.-ին հանրային քննարկման դրված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նույնաբովանդակ նախագծի⁴ հիմնավորում էր ներկայացվում այն, որ աշխատող, և հատկապես հանրային ծառայություն իրականացնող

⁴ <https://www.e-draft.am/projects/3541/justification>



ԻՐԱԿՈՒԲԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

անձինք «պարբերական շփումների մեջ են գտնվում հասարակության տարբեր ներկայացուցիչների հետ»:

Բարձր գնահատելով հանրային առողջությունն ապահովելու պետության նպատակը, գտնում ենք, այնուամենայնիվ, որ դրա իրականացման մեթոդները հակահրավակն են և հակասում են մարդու սահմանադրական իրավունքներին: Մասնավորապես քննարկվող կարգավորումները հակասում են Հայաստանի Հանրապետության սահմանադրության 25-րդ /Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը/, 28-րդ /Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը/, 29-րդ /Խտրականության արգելքը/, 31-րդ /մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը/, 57-րդ /Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները/, 78-րդ / Համաչափության սկզբունքը/ հոդվածներին:

Այսպես՝

Նախագծերում փոփոխություններ կատարելու միակ հիմք կորոնավիրոսով վարակվածների թվի աճը դիտարկելը նախ և առաջ խտրական մոտեցում է գրանցված աշխատողների նկատմամբ՝ բնակչության մնացած մասի համեմատ, քանի որ համավարակը տարածված է ՀՀ-ում և վերաբերում է յուրաքանչյուր բնակչի, հասարակության տարբեր ներկայացուցիչների միջև շփումներ տեղի են ունենում ամենուր, ինչը բոլորովին պայմանավորված չէ անձանց աշխատանքային գործունեությամբ: Ավելին, գերծանրաբեռնված պայմաններում աշխատող հասարակական տրանսպորտից օգտվելիս ՀՀ իրավագործության ներքո գտնվող անձինք գտնվում են կորոնավիրուսային հիվանդության տարածման համար առավել բարենպաստ պայմաններում: Մինչդեռ պետական և համայնքային մարմինների կողմից որևէ արդյունավետ քայլ նման իրավիճակից բխող ռիսկերի նվազեցման ուղղությամբ չեն նախաձեռնվել: Այսպիսով աշխատող քաղաքացիներն ավելի վատթար վիճակում են դրվում չաշխատող /այդ թվում՝ գրադավաժություն ունեցող, սակայն գրանցված աշխատող չհանդիսացող/ անձանց համեմատ: Ավելին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում նշված է, որ վերը նշված կարգավորումները չեն տարածվում Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, վարչապետի, համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Սահմանադրական դատարանի դատավորի, անկախ պետական մարմնի անդամի, ինքնավար մարմնի անդամի, Վիճակագրության պետական խորհրդի անդամի, վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանի դատավորի, գլխավոր դատախազի պաշտոնների վրա, ինչպիսի կարգավորումները խտրական են և կարող են հանգեցնել ինչպես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ մասնավոր կազմակերպությունների աշխատողների իրավունքների խախտումների, ինչը հակասում է Սահմանադրության 29-րդ հոդվածին:

Ավելին՝ 2021 թվականի հունվարի դրությամբ ՀՀ-ում առկա է 637 386 գրանցված աշխատող, որից 204 753-ը աշխատում է պետական, համայնքային մարմիններում, 432 633-ը՝ մասնավոր հատվածում⁵: ՀՀ-ում

⁵ https://armstat.am/file/article/sv_01_21a_142.pdf



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

մշտական բնակչության թիվը 2021 թվականի հունվար ամսի դրությամբ 2 963.3 է՝ Այսինքն՝ կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, այդ թվում՝ ՊՇՌ հետազոտությունն անցնելու կամ պատվաստվելու պարտավորությունը դրվում է ՀՀ բնակչության միայն առնվազն 1/4-ի վրա:

Նման պայմաններում, Հանրապետության բնակչության առնվազն 1/4-ի նկատմամբ հետազոտությունն անցնելու կամ պատվաստվելու պարտականությունն նախատեսելը չի հիմնավորվում նաև հանրային իմունիտետ ձևավորելու անհրաժեշտությամբ, քանի որ ՊՇՌ հետազոտությունների իրականացումը, անգամ պարբերական բնույթ կրող, այդ նպատակն ապահովել չի կարող:

Անհասկանալի է նաև աշխատողից առավելագույնը 72 ժամ վաղեմության ՊՇՌ հետազոտության արդյունքը ներկայացնելու պարտականության սահմանումը, եթե այդ հետազոտության արդյունքները վավեր են առնվազն 14 օր, քանի որ աշխատողների կողմից ՊՇՌ հետազոտության բացասական արդյունք ներկայացնելու պահանջը որևէ կերպ չի նվազեցնում վարակի տարածվածությունը, և հետազոտությունից հետո անձը կարող է վարակվել և դառնալ վարակի աղբյուր: Ավելին, ՊՇՌ տեստավորման արդյունքները 100% ճշգրիտ չեն, որի մասին վկայում է թեստի արդյունքներում արվող վերապահումը:

Նման պայմաններում անդրադառնալով առաջարկվող կարգավորումների և սանկցիաների իրավաչափությանը՝ գտնում ենք, որ դրանք անհրաժեշտ, համաչափ և հիմնավոր չեն հետապնդվող նպատակին հասնելու համար, այն է՝ կանխարգելելու կորոնավիրուսային հիվանդության տարածվածությունը և պաշտպանելու Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքն ու առողջությունը և հակասում են ՀՀ սահմանադրության 78-րդ հոդվածին:

Ավելին, Հայաստանի Հանրապետությունում ՊՇՌ հետազոտության գումարը տատանվում է 8000-15000 ՀՀ դրամի շրջանակներում, ինչը ՀՀ սոցիալ-տնտեսական պայմաններում նվազագույն և միջին աշխատավարձ ունեցող աշխատողների համար էական ֆինանսական բեռ է: Բացի այդ, պարբերաբար թեստավորվելու պահանջի դեպքում ահռելի հերթեր են գոյանում բժշկական կենտրոններում, ինչը մի՞ կողմից՝ կուտակումների տեսանկյունից վարակվելու լրացուցիչ ռիսկ է պարունակում⁶, մյուս կողմից՝ ժամանակային և այլ ռեսուրսներ է պահանջում անձից: Նման երկրնտրանքի պայմաններում պատվաստումը հանդիսանում է չպարտադրված հարկադրանք: Ընդ որում, պատվաստված անձինք ևս կարող են վարակվել կորոնավիրուսային հիվանդությամբ և ավելին՝ վարակել այլ անձանց, մինչդեռ պատվաստված քաղաքացիներն ազատվում են ՊՇՌ հետազոտությունն անցնելու պարտավորությունից/ինչը ևս անհասկանալի է, քանի որ նման պայմաններում պատվաստվածներին ՊՇՌ հետազոտության ենթարկվելու պարտականությունից ազատելով վարակի տարածման կանխարգելման խնդիրը չի լուծվում/: Այժմ քննարկվում է նաև ՊՇՌ թեստեր հանձնելու ժամկետը կրճատելու հարցը, ինչը կավելացնի նաև աշխատողների ֆինանսական բեռը: Նման հետևանքներն իրենց բնույթով և ծանրությամբ պատժիչ են, և աշխատողին դնում են խոցելի իրավիճակում՝ հետևելու հարկադրված վարվելակերպին:

Վերը նշված պարտականությունը չկատարելը հանգեցնում է աշխատողի նկատմամբ անբարենպաստ հետևանքների, այդ թվում՝ վարձատրությունից զրկելուն և հետագայում աշխատանքից/ծառայությունից ազատելուն: Նման հետևանքներն իրենց բնույթով և ծանրությամբ պատժիչ

⁶ https://armstat.am/file/article/nasel_01.01.2021.pdf

⁷ <https://www.armtimes.com/hy/article/223596>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Են և աշխատողին դնում են խոցելի իրավիճակում՝ հետևելու հարկադրված վարվելակերպին: Իսկ նշվածն ուղղակիորեն հակասում է ՀՀ սայմանադրության 25-րդ, ինչպես նաև 57-րդ հոդվածներին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Իր հերթին ՀՀ Սահմանադրական դատարանը 19 մարտի 2019 թ. ՍԴՈ-1449 որոշմամբ արձանագրել է, որ աշխատանքից ազատման հիմքերն օրենքով սպառիչ նախատեսելուց բացի, պետությունը պետք է ապահովի այդ հիմքերի համապատասխանությունը Սահմանադրության 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջներին, մասնավորապես, աշխատանքային պայմանագրերի լուծման հետ կապված իրավակարգավորումները պետք է պարունակեն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, լինեն պիտանի և անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, համարժեք՝ սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը, լինեն բավարար չափով որոշակի, իսկ այդ կանոնակարգումներով հիմնական իրավունքների սահմանափակումները չգերազանցեն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Ավելին, Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված բանաձևը «Կորոնավիրուսային պատվաստանյութերի էթիկական, իրավական և գործնական նկատառումների մասին» սահմանում է, որ պետությունները պարտավոր են երաշխավորել քաղաքացիների տեղեկացվածությունը, որ պատվաստումը պարտադիր չէ և որևէ մեկը ենթակա չէ քաղաքական, սոցիալական կամ այլ ճնշումների պատվաստվելու համար, եթե չի ցանկանում պատվաստվել, ինչպես նաև պարտավոր է երաշխավորել, որ որևէ մեկը չի ենթարկվի խտրականության պատվաստված չլինելու համար՝ հնարավոր առողջական վտանգներով պայմանավորված կամ պատվաստվելու չցանկանալու պատճառով⁸:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

- Շրջանառությունից հանել «Աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ ել փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:
- Շահագրգիռ կողմերի հետ քննարկել կանխարգելիչ միջոցառումների կիրառման հարցերը՝ բացառելու մարդու իրավունքների չհիմնավորված սահմանափակումների, այդ թվում՝ խտրականության և աշխատանքային իրավունքների խախտումների հնարավորությունը:

⁸ <https://pace.coe.int/en/files/29004/html>